

Ո՞Վ Է ՍԱՊԻՀԱ ԿԵՕՔՃԷՆ՝

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԴԱԶՈՒՆ՝
ԱԹԱԹԻԻՐՔԻ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐ
ՍԱՊԻՀԱ ԿԵՕՔՃԷՆ՝
"ԹՐՔԱՑԱԾ" ՀԱՅ ՈՐԲՈՒՀԻ ԽԱԹՈՒՆ ՍԵՊԻԼՃԵԱՆ



Սապիհա Կեօքճէն

2004 թուականի Փետրուարի 6ին, Պոլսոյ «Ալօս»ին մէջ իր պատմական յօդուածով՝ Մեծ նահատակ Հրանդ Տինք վար առաւ թրքական ցեղապաշտ քարոզչութեան "սարքած" մեծագոյն կեղծիքներէն մէկուն վրայի "ամօթի" քօղը: Հիւլէական ռումբի պայթիւնի ապղեցութեամբ այս յօդուածը՝ որուն վերնագիրն էր «Սապիհա Հաթունի գաղտնիքը» («Sabiha Hatun'un Sirri») Հրանդ Տինք կը յայտնէր թէ աշխարհի առաջին կին ռազմական օդաչուն՝ Աթաթիւրքի սիրեցեալ դուստր Սապիհա Կեօքճէն, «թրքացուած» հայ որբուհի, Հայոց Յեղասպանութենէն վերապրող Խաթուն Սեպիլճեանն է...: Թուրք ազգայնամուլներ կատաղի ցոյցեր կատարեցին «Ալօս»ի խմբագրատան առաջ, մինչ Թուրքիոյ լուսաւորեալ մտաւորականութեան մամլոյ օրկաններէն՝ «Հիրրիէթ», Քալքան Էրսինի գրիչով տպագրեց զգայացունց յօդուած մը եւս, 2004 թուականի Փետրուար 21ին՝ «Սապիհա Կեօքճէն թէ Խաթուն Սեպիլճեան» («Sabiha Gökcen mi Hatun Seilayan mi?») վերտառութեամբ՝ որուն իբր "պատասխան" Թուրքիոյ ռազմական գլխաւոր վարչութիւնը, "յատուկ հաղորդագրութեամբ" վայն որակեց "Թուրքիոյ ազգային պատուին ուղղուած անարգանք...": Այս վերջին հաղորդագրութիւնը խատորէն

քննադատուեցաւ որպէս ցեղապաշտական արտայայտութիւն՝ ԱՄՆի State Departmentի լոյս ընծայած տեղեկագրին մէջ, մինչ Թուրքիոյ բազմաթիւ ապատամիտ մտաւորականներ յայտարարեցին թէ իրենք "Անաթոլիական Մշակոյթ"ի վաւակներ են եւ ոչ թէ մի քան հազար հաշուող թրքազգի քոչուոր ցեղախումբերու յետնորդներ...:

Իսկ ո՞վ էր իսկապէս Սապիհա Կեօքճէն, որուն պարմուհին՝ Այնթապի նախկին բնակչուհի Հոհիպիմէ Սեպիլճեան հաստատեց, Աթաթիւրքի 1925 թուին, 13 տարեկանին որդեգրած դստեր, ծայրայեղ չքաւորութեան մէջ ապրող Խաթուն Սեպիլճեանին հայազգի ինքնութիւնը:

Թրքական պետական տեղեկատուութիւնը Օսմանեան կայսրութենէն ժառանգուած, բռնի կրօնափոխ, ենիչերի թէ տեվշիրմէ հայ թէ քրիստոնեայ, նոյնիսկ հրեայ թէ ալպանացի ծագումով մանուկներ, երիտասարդ-երիտասարդուհիներու 500ամեայ թրքացման ծրագիրները շարունակեց նաեւ Աթաթիւրքեան հանրապետութեան օրօք, սկսելով ծագումով "սապաթայճը" (շաքաթապահ հրեայ) Քեմալ Աթաթիւրքէն՝ որուն հայրը մինչեւ այսօր յայտնի չէ...: Վերջինս՝ 8 վաւակներ որդեգրեց, բայց ըստ թրքական եւ քրտական աղբիւրներու, "խենթի պէս" սիրահարուած էր իրեն յոյս եւ կորով ներշնչող, Սապիհա իշխանուհիի անունը կրող, "երկնականմարի մասնիկ" ազգանունը կրող (Կեօքճէն) դստեր, որուն տուաւ լաւագոյն կրթութիւն եւ ծագումով հայուհիին ցանկութեամբ ալ՝ 1935ին Վիւննա քաղաքէն Մոսկուա, ուսանելու օդաչուական բարձրագոյն դպրոցին մէջ՝ որպէս ուսուցիչ ունենալով ռուս աշխարհահռչակ ռազմական օդաչու Չքալովը:

Սապիհա, աւարտելէ ետք ռազմա-օդային ուժերու ակադեմիան, իր վարպետութիւնը կը փորձարկէ Էսքիշեհիրի օդային խարխախ կործանիչ ու ռմբաձիգ օդանաւերու վրայ: 1937ին, մասնակցելով Եգէականի եւ Թրակիոյ օդային ռազմափորձերուն, կ'ուղարկուի թոնրով ռումբեր տեղացնելու Տերսիմի Չապա եւ Մեծ Եղեռնէն



Սապիհան Աթաթիւրքի ընկերակցութեամբ

փրկուած հայ ընթաստներու գիւղերուն վրայ, արեան մէջ ձյւնելով թրքական բռնատիրութեան դէմ ապատութեան դրօշ պարպած քաջարի ժողովուրդին ապատութիւնը:

Աթաթիւրքին հետ կը տեսնուի ամէն հանդիսութեան ընթացքին, իր օդային ուժերու պօրավարի համապգեստով: Կը թռչի 22 տարբեր ինքնաթիռներու վրայ 8000 ժամ, որոնցմէ 32ը՝ ռազմադաշտին վրայ: Կը դառնայ «Türkusu Flight School»-ի գլխաւոր մարպիչուհին, պատրաստելով "թուրք" կին օդաչուներու սերունդ մը:

Լայնօրէն իր անունը կ'օգտագործուի ֆաշիստական-թրքական քարոզչութեան մէջ, իր իսկ իբր թէ հեղինակած գիրքը՝ «Կեանք մը Աթաթիւրքի Ուղիին վրայ» կը դառնայ Թուրքիոյ ազգայնամուլական շրջանակներու "սրբազան հաւատամքներէն" մէկը...: Այսօր Իսթանպուլի օդակայանը իր անունով կը կոչուի:

Կը կարծուի, թէ ինչպէս Հրանդ Տինքի այրի Ռաքելի եւ որդւոյն՝ Արատի դատարանին մէջ կատարած ցուցմունքներէն՝ Սապիհա Կեօքճէնին հայ ըլլալուն գաղտնիքը երեւան հանելը նաեւ ճակատագրական եղած է մեծ նահատակին համար, որովհետեւ "ժողովրդավարութիւն" քարոզող Թուրքիոյ մէջ, հայ ըլլալը նախատիք կը համարուի մինչեւ այսօր...: Այն ժողովուրդը, որ Օսմանեան պետութեան եւ թէ հանրապետութեան տուաւ մեծագոյն արուեստի ու մշակոյթի գործիչներ, լեզուաբաններ, տնտեսագէտներ ու նոյնիսկ նախարարներ, միշտ ալ համարուած էր "ստորադաս գեղ" մը՝ նոյնիսկ եթէ այսօրուան Թուրքիոյ քաղաքական ղեկավարութեան մէջ ծագումով հայեր կան...:

Այս "թապու"ն կոտրելուն համար Հրանդ Տինք վճարեց իր կեանքով...: Սակայն միշտ ալ մեծ իրագործումները մեծ նահատակներ կը պահանջեն:

ԴԻՏԱԿ

